

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ /ՍՈՂՈՒԼ 1/**

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ԲՆԱԳԻՏԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԱՄԲԻՈՆ	ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ, ՔԻՄԻԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՍՈՂՈՒԼ	ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ /ՍՈՂՈՒԼ 1/
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ ԵՎ ՍՈՂՈՒԼԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ	1307B4/03.1 3 ՍՈՂՈՒԼ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱ
ԿՈՒՐՍ / ԿԻՍԱՍՅԱԿ	2-րդ կուրս 2-րդ կիսամյակ
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	<p>ՁԵՎԱՎՈՐԵԼ</p> <p>դեղաբանական խմբերի հետ ծանոթացում, ներկայացնել նրանց դասակարգման սկզբունքները: Դեղանյութերի ազդեցությունը օրգան-համակարգերի վրա, սկսած ամբողջական օրգանիզմից մինչև առանձին բջիջները, ազդակները և ֆերմենտները: Ծանոթացնել առարկայի խնդիրներին, որից հիմնականը գտնել նոր էֆեկտիվ և առավել անվնաս դեղամիջոցներ:</p>
ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	<p>ԳԻՏԵԼԻՔ</p> <ul style="list-style-type: none"> Նկարագրել վեգետատիվ և սիմպաթիկ նյարդային համակարգի վրա ազդող դեղաբանական խմբերը: Դասակարգել խոլիներգիկ սինապսային հաղորդականության վրա ազդող դեղամիջոցները: Բացատրել սիրտ-անոթային համակարգի վա ազդող դեղամիջոցների դեղաբանությունը: <p>ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ</p> <ul style="list-style-type: none"> Տարբերակել այս կամ այն խմբին պատկանող դեղամիջոցները, նրանց հոմանիշները: Ճիշտ կողմնորոշվել փոխարինողների ընտրության հարցում: <p>ՀՄՏՈՒԹՅՈՒՆ</p> <ul style="list-style-type: none"> Տիրապետել դեղամիջոցների ցուցումներին, նրանց հակացուցումներին և այն հնարավոր զուգորդումներին, որոնք թույլատրելի են այս կամ այն հիվանդությունների ժամանակ:
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐ	<ul style="list-style-type: none"> ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 5կրեդիտ ԼՍԱՐԱՅԻՆ ԺԱՄ - 64 ժամ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - 32 ժամ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 20 ժամ ՄԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 12 ժամ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ - 4 ժամ

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ	Նախնական գիտելիքներ ֆարմակոլոգիայի
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՐՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	Դասախոսություն Ինքնուրույն և խմբային աշխատանք, վեբին դիագրամ, մտազրոհ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	<ul style="list-style-type: none"> • Հասկացողություն դեղաբանությունն առարկայի մասին զարգացման պատմությունը, խնդիրները: • Խոլիներգիկ սինապսային հաղորդականության վրա ազդող դեղերի դեղաբանությունը: Խոլինընկալիչները անուղղակի և ուղղակի խթանող միջոցներ: Մուսկարինային ընկալիչների վրա ազդող դեղամիջոցներ / Մ-խոլինոմիմետիկներ, Մ-խոլինոլիտիկներ: Նիկոտինային ընկալիչների վրա ազդող միջոցներ: /Ն-խոլինոմիմետիկներ, Ն-խոլինոլիտիկներ/ • Սիմպաթոմիմետիկ դեղամիջոցներ: Ուղղակի և անուղղակի ազդող ադրենոմիմետիկներ: Հակաադրեներգիկ դեղամիջոցներ: Ալֆա և բետա ադրենոլիտիկներ: Սիմպաթոլիտիկներ: • Սիրտ-անոթային համակարգի վրա ազդող դեղեր: Սրտային գլիկոզիդներ, Հակաատիթմիկ, հակահեղձուկային, հակահիպերտենզիվ, հակաաթերոսկլերոզային դեղերի դեղաբանություն: • Միզամուղ դեղանյութերի դեղաբանությունը: Նրանց դասակարգումը և կիրառումը: • Ընդերածին կենսակարգավորիչների դեղաբանությունը Սերոտոնին, վազոակտիվ պեպտիդներ, պրոստագլանդիններ, թրոմբոքսան, լեյկոտրիններ: • ԳԱԿԹ-երգիկ դեղամիջոցների դեղաբանությունը: • Հակաալերգիկ դեղամիջոցներ: Հիստամին և հակահիստամինային դեղերի դեղաբանությունը:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻԶ	<p>1. Է.Ս.Գաբրիելյան Կ. Պ. Հակոբյան Է.Ա. Ամրոյան «Ֆարմակոլոգիա» Երևան, 1989թ</p> <p>2. Դ.Ա. Խարկևիչ «Ֆարմակոլոգիա» Մոսկվա, 2010թ</p> <p>1. Դոցենտ Լ.Ա.Կարապետյան «Դեղերի և պարաստուկների համառոտ տեղեկատու»</p> <p>2. С.М. Дрогожоз «Фармакология на ладонях»</p>
ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ	Ստուգողական աշխատանք
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	<p>Բաղադրիչ 1-10 % / հաճախումներ /</p> <ol style="list-style-type: none"> 1. Բաղադրիչ 2-30 % / ընթացիկ ստուգում / 2. Բաղադրիչ 3-50 % / ամփոփիչ ստուգում / 3. Բաղադրիչ 4-10 % / ընթացիկ ակտիվություն / <p>Ընթացիկ ստուգումներ</p> <p>Նախատեսված են 2 գրավոր ընթացիկ ստուգում: Հարցատոմսը պարունակում է 8 հարց 2-ը 20,20 և 6-ը 10 ,100 միավոր առավելագույն արժեքով: Եզրափակիչ ստուգումը բանավոր է 3 հարց 40, 30, 30 միավորային արժեքով:</p>

ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՄԱՆԴՂԱԿ

Գնահատման թվային միավորը	Տառային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը
96-100	A+	5+
91-95	A	5
86-90	A-	5-
81-85	B+	4+
76-80	B	4
71-75	B-	4-
66-70	C+	3+
61-65	C	3
40-60	C-	3-
Մինչև 39	D	2

ՈՒՍԱՆՈՂԻ ԾԱՆՐԱԲԵՈՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ

կրեդիտ/կրեդիտժամ-5/150

Հ/Հ	Թ Ե Մ Ա	Լսարանային ժամեր			Ուսանողի ինքնուրույն Աշխատա ժամանակը	Ուսանողի ընդհանուր աշխատաժամանակը
		Դասախոսություն	Գործնական	Մեմինար		
1.	Դեղաբանությունը որպես գիտություն: Խնդիրները:	2			2	4
2.	Վեգետատիվ նյարդային համակարգի վրա ազդող դեղեր: Սիմպաթիկ նյարդային համակարգ:	2			2	4
3.	Դեղաձև, դեղանյութ, դեղամիջոց		2		2	4
4.	Խոլիներգիկ սինապսային հաղորդականության վրա ազդող դեղեր: Դրոդոլ և խոլինէսթերազան արգելակող դեղեր	2			2	4
5.	Պետական ֆարմակոպեա		2		2	4
6.	Խոլինընկալիչները պաշարող միջոցներ: Միոռելաքսանտներ:	2			2	4
7.	Դեղատոմս: Դեղամիջոցների դուրսգրման, բաց թողնման կանոնները		2		2	4
8.	Սիմպաթոմիմետիկ դեղամիջոցներ: Ադրենընկալիչները ակտիվացնող միջոցներ:	2			2	4
9.	Ադրենընկալիչները պաշարող միջոցների դեղաբանությունը	2			2	4
10.	Հեղուկ դեղաձևերի դուրսգրման կանոնները: Արտաքին, ներքին օգտագործման համար լուծույթներ		2		2	4
11.	Վեգետատիվ, սիմպաթիկ ՆՀ թեմաների կրկնություն			2	4	6
12.	Հակազերճնշումային դեղամիջոցների դեղաբանությունը: Նրանց ազդեցության մեխանիզմը:	2			2	4
13.	Հակահեղձուկային միջոցների դեղաբանությունը: Դասակարգումը: Ազդեցության մեխանիզմը:	2			2	4
14.	Լորձեր, սուսպենզիաներ, էմուլսիաներ, ջրաթուրմեր, եփուկները: Դեղատոմսերը		2		2	4
15.	Հակազերճնշումային, հակահեղձուկային միջոցներ թեմաների կրկնություն			2	4	6
16.	Սրտային անբավարարության ժամանակ կիրառվող սրտային Գլիկոզիդների դեղաբանությունը	2			2	4
17.	Սրտային գլիկոզիդներ, հակաառիթմիկ միջոցներ թեմաների կրկնություն			2	4	6
18.	Ռիթմակարգավորիչ դեղամիջոցների դեղաբանությունը	2			2	4

19.	Մզվածքներ, նորգալենային դեղապատրաստուկներ, հանուկներ, լինիմենթներ		2		2	4
20.	Միզամուղ միջոցների դեղաբանությունը: Նրանց դասակարգումը: Ազդեցության մեխանիզմները:	2			2	4
21.	Ընդերածին կենսակարգավորիչներ: Սերոտոնին: Վազոակտիվ պեպտիդներ	2			2	4
22.	Պրոստագլանդիններ: Թրոմբոքսան: Լեյկոտրիեններ:	2			2	4
23.	Միզամուղ, ընդերածին կենսակարգավորիչներ թեմաների կրկնություն			2	4	6
24.	Փափուկ դեղաձևերի դեղատոմսային գրառության ձևերը /քսուկներ, մածուկներ, դեղամուր, ցուպիկներ, սպեղանի/		2		2	4
25.	Հակաթերոսկլերոզային միջոցների դեղաբանությունը:	2			2	4
26.	Կարծր դեղաձևերի դեղատոմսային գրառության ձևերը: Հաբեր, դրաժեներ, փոշիներ:		2		2	4
27.	Կենտրոնական նյարդային համակարգի վրա ազդող դեղեր: ԳԱԿԹ-երգիկ միջոցներ:	2			2	4
28.	Հակաաթերոսկլերոզային միջոցներ, ԿՆՀ-ի վրա ազդող միջոցներ թեմաների կրկնություն			2	2	4
29.	Դեղապարկուճների, գրանուլաներ դեղատոմսային գրառության ձևեր		2		2	4
30.	Կրկնություն հակահեղձուկային, հակաաթերոսկլերոզային, հակագերճնշումային, միզամուղ դեղեր թեմաներից			2	2	4
31.	Հակաալերգիկ միջոցներ: Իմունոդեպրեսանտներ: Հիստամին, հակահիստամինային միջոցներ	2			2	4
32.	Ներարկման համար դեղաձևերի գրառության ձևերը:		2		2	4
Ընթացիկ ստուգում 1					4	4
Ընթացիկ ստուգում 2					4	4
Ամփոփիչ ստուգում					6	6
Ընդամենը		32	20	12	86	150